48-ՐԴ ՆԻՍՏ

17 դեկտեմբերի 1918թ.

Նիստը բացվում է երեկոյան ժ. 8-ին, նախագահությամբ *Ա. Սահակյանի.* մինիստրական օթյակում են Մինիստր-նախագահը, ներքին գործոց, խնամատարության, լուսավորության, իրավարարության և ֆինանսների մինիստրները և պետական կոնտրոլյորը:

Ս. Տեր-Մարտիրոսյան - Զեկուցում է ցորեն գնելու համար պարենավորման մինիստրի անունով 7 միլիոնի վարկ բանալու օրինագծի մասին:

Խնդիրը բազմակողմանի քննության է ենթարկվում: Վիճաբանության մասնակցում են՝ պարենավորման մինիստր, Վրացյան, Ազատյան, Գյուլնազարյան, Բուդաղյան, Հովի. Մելիքյան, Մամիկոնյան: Ապա քվեարկվում, ընդունվում է օրինագիծը երրորդ ընթերցումով և հանձնվում խմբագրական հանձնաժողովին:

Ֆինանսների մինիստր - Զեկուցում է պետական բյուջեի մասին:

Հ. Սարգսյան - Զեկուցում է Երևանի նահանգի կոոպերատիվների միությանը փոխառություն տալու առաջարկի մասին:

Որոշ թերությունների պատճառով ֆինանսների մինիստրի առաջարկությամբ հարցի քննությունը հետաձգվում է հաջորդ նիստին:

Ս. Տեր-Մարտիրոսյան - Զեկուցում է նոր բոնաներ բաց թողնելու օրինագծի մասին: Ընդունվում է շտապողաբար, քննվում և երրորդ ընթերցումով ընդունվում է խորհրդարանի կողմից և հանձնվում խմբագրական հանձնաժողովին:

Նիստը փակվեց գիշերվա ժ. 11-ին:

«Զանգ» 12 հունվարի 1919թ.